

ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԴԵՄ ՀԱՄԱՏԵՂ  
ՊԱՅՔԱՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՎԵՆԻՍԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՄԱՅԻՍԻ 2-5, 2006  
ՏՐԻԵՍՏԵ, ԻՏԱԼԻԱ

Տրիեստի համալսարանի պրոֆեսոր,  
Վենիսի հանձնաժողովի ղեկուցող  
Սերժո Բարտոլե, Մայիսի 2, 2006

Պատգամավորական  
անձեռնխելիությունը և նրա  
ազդեցությունը կոռուպցիայի վրա

# ՊԱՏՉԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՆՃԵՌՆԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ



- Նա պատգամավորական անձեռնխելիությունը որակեց որպես պառլամենտի անկախության երաշխիք և մատնանշեց պատգամավորական անձեռնխելիության 2 տեսակներ՝ անձեռնխելիություն և անխախտություն. անձեռնխելիությունը՝ որպես պառլամենտի անդամների անձեռնխելիություն, որը վերաբերում է նրանց հայտնած կարծիքին և գործողությունների կատարմանը և քվեարկությանը: Նա կարևորեց այն հանգամանքը, որ պառլամենտի անդամները պետք է ունենան լիակատար անկախություն՝ անձնական և աշխատանքային:

# ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

- *1984 թ. Իտալիայի սահմանադրությամբ պառլամենտի անդամների նկատմամբ չէր կարելի քրեական գործ հարուցել առանց պառլամենտի թույլտվության,*
- *1993 թ. Իտալիայում սահմանադրական փոփոխությունների հետևանքով հանվեց պառլամենտի թույլտվության պահանջը պատգամավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար:*

# ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

*Ֆրանսիայում գործող պատգամավորական անձեռնմխելիության համակարգի առանձնահատկությունների համաձայն՝ Ֆրանսիայում քրեական դատավարության սկսելու համար պառլամենտի թույտվությունը չի պահանջվում, սակայն պառլամենտը կարող է կասեցման պահանջով հանդես գալ, եթե այն վտանգում է պառլամենտի անդամների ազատությունը:*

*1995 թ. սահմանադրական փոփոխություններ*

# ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Գերմանիայում պառլամենտի անդամները կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության՝ միայն պառլամենտի թույտվությամբ:

Պառլամենտի թույտվությունը քրեական դատավարության համար պարտադիր է: Գերմանիայի սահմանադրության համաձայն՝ Բունդերստագը կարող է պահանջել քրեական դատավարության կասեցում, եթե այն գտնում է անհրաժեշտ:

Գերմանիայում պառլամենտի կողմից նախքան քրեական դատավարության կասեցումը պահանջելը պառլամենտը պարտավոր է հիմնավորել իր կողմից քրեական դատավարությունը կասեցնելու պահանջը:

## ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

1995 թ. Գերմանիայում Բուլնդերստագը ընդունեց օրենք՝ հանելով պառլամենտի անդամների նկատմամբ քրեական դատավարության կասեցման պահանջը: Գերմանիայում ընդունված օրենքի համաձայն՝ պառլամենտի անդամների նկատմամբ քրեական գործ հարուցելու թույլտվություն չի պահանջվում:

- Պատգամավորական անձեռնխելիությունը շեղում է հավասարության սկզբունքից. հետևաբար, անձեռնխելիությունն ի դեմս հավասարության:
- Իտալիայի սահմանադրական դատարանի կարծիքն այս հարցի վերաբերյալ, ըստ որի պատգամավորական անձեռնխելիությունն ստեղծում է կոնֆլիկտ դատավորների միջև: Այնուամենայնիվ, սահմանադրական դատարանը գտնում է, որ, տալով լիիրավ ազատություն պառլամենտին, այն կնվազեցնի դատավորների իշխանությունը, իսկ եթե պառլամենտը չունենա անկախություն, այն վնասում է պառլամենտի շահերը:

*Սերժո Բարտոլե*

OECD-ի հակակոռուպցիոն  
բաժանմունքի պետ Պատրիկ Միուլեր,  
Մայիսի 2, 2006

---

OECD-ի օտարերկրյա  
կաշառքի մասին կոնվենցիա,  
*1999 թ. փետրվար*

OECD-ի օտարերկրյա կաշառքի մասին կոնվենցիա,  
*1999 թ. փետրվար*

- Այն վավերացվել է OECD-ի անդամ 30 երկրների և ոչ անդամ 6 երկրների կողմից և իր նշանակալի ազդեցությունն ունեցել կոռուպցիայի դեմ պայքարում:

## OECD-ի օտարերկրյա կաշառքի մասին Կոնվենցիայի 1-ին հոդված

- Կոնվենցիայի 1-ին հոդվածը տալիս է օտարերկրյա պետական պաշտոնյայի կաշառակերության սահմանունը, որտեղ կաշառող կողմի նպատակը դրսևորվում է նրանում, որ օտարերկրա պետական պաշտոնյան կատարի կամ զերծ մնա այնպիսի գործողությունների կատարումից, որը կապված է իր ծառայողական պարտականությունների հետ:

## OECD-ի օտարերկրյա կաշառքի մասին Կոնվենցիայի 2-րդ հոդված

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի, համաձայն՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է միջոցներ ձեռնարկել սահմանելու իրավաբանական անձանց պատասխանատվությունը՝ օտարերկրյա պետական պաշտոնյայի կաշառքի հետ կապված հարաբերություններում: Կոնվենցիան հնարավորություն է ընձեռում անդամ-երկրներին որպես պատասխանատվության միջոց ընտրել քրեական կամ վարչական պատասխանատվության միջոցներ այնքանով, որքանով դրանք լինեն արդյունավետ, համաչափ և սարհամոզիչ:

## OECD-ի օտարերկրյա կաշառքի մասին Կոնվենցիայի 3.1-րդ հոդված

- Կոնվենցիայի 3.1 հոդվածի մամաձայն՝ երկրները պետք է դիմեն այնպիսի սանկցիաների, որոնք արդյունավետ են, համաչափ և սարհամոզիչ օտարերկրյա կաշառքին վերաբերող դեպքերում: Նույն հոդվածն անդրադառնում է ազատագրկմանն ու նյութական պատասխանատվության միջոցներին:

## OECD-ի օտարերկրյա կաշառքի մասին Կոնվենցիայի 3.2-րդ հոդված

Կոնվենցիայի 3.3 հոդվածը  
պահանջում է կաշառքի և  
նրանից ստացված  
հասույթների բռնագրավում:

## OECD-ի օտարերկրյա կաշառքի մասին Կոնվենցիայի 3.4-րդ հոդված

Կոնվենցիայի 3.4 հոդվածը  
առաջարկում է անդամ-երկրներին  
քաղաքացիական և վարչական  
պատասխանատվության  
միջոցներ:

## OECD-ի օտարերկրյա կաշառքի մասին Կոնվենցիայի 4.1-րդ հոդված

- Կոնվենցիայի 4.1 հոդվածի համաձայն՝ անդամ-երկրները պարտավոր են կիրառել տարածքային ընդդատություն այն դեպքերում, երբ հանցագործության որևէ գործողություն կատարվում է երկրի տարածքում: Կոնվենցիան պարտադրում է նաև, որ անդամ-երկրները դատապարտեն իրենց պետական պաշտոնյաներին իրենց երկրի սահմաններից դուրս կատարված հանցագործությունների համար:

## OECD-ի օտարերկրյա կաշառքի մասին Կոնվենցիայի 5-րդ հոդված

- Կոնվենցիայի 5-րդ հոդվածը սահմանում է օտարերկրյա պետական պաշտոնյայի նկատմամբ հետաքննությունն ու դատապարտումը կաշառքի վերաբերյալ գործերում՝ անկախ տվյալ պաշտոնյայի երկրի ազգային կամ այլ անօրինական շահերից:

## OECD-ի օտարերկրյա կաշառքի մասին Կոնվենցիայի 6-րդ հոդված

- Կոնվենցիայի 6-րդ հոդվածը վերաբերում է վաղենուլթյան ժամկետին, որը պահանջում է կաշառքի վերաբերյալ գործերում ապահովել բավարար ժամանակ գործի հանգամանորեն հետաքննության և դատապարտման համար:

## OECD-ի օտարերկրյա կաշառքի մասին Կոնվենցիայի 7-րդ հոդված

- Կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ եկամուտների լվացումը, կապված օտարերկրյա կաշառքի հետ, պետք է դիտվի որպես ներքին ներպետական կաշառքի վերաբերյալ հանցագործություններ

## OECD-ի օտարերկրյա կաշառքի մասին Կոնվենցիայի 8-րդ հոդված

- Կոնվենցիայի 8-րդ հոդվածը սահմանում է հաշվապահական հաշվառման և վերստուգման կանոնների նշանակությունը օտարերկրյա կաշառքի բացահայտմանն ու կանխարգելմանն ուղղված պայքարում:

# Փոխադարձ իրավական աջակցությունը Կոնվենցիայի 9-րդ և 10-րդ հոդվածներ

Կոնվենցիայի 9-րդ և 10-րդ հոդվածները կարևորում են փոխադարձ իրավական աջակցության նշանակությունը 2 տեսանկյունով՝

- Կոնվենցիայի կողմերը պարտավորվում են ապահովել անհապաղ և արդյունավետ իրավաբանական օգնություն միմյանց իրենց օրենքներով, համաձայնագրերով և պայմանավորվածություններով սահմանված կարգով.
- Կողմերն իրենք պետք է արդյունավետորեն հայտնաբերեն և օգտագործեն արտասահմանում կատարված կաշառքի վերաբերյալ հանցագործությունների ապացույցները:

# Օտարերկրյա պետության օրենքը խախտած անձի հանձնումն այդ պետությանը Կոնվենցիայի 10.1-րդ հոդված

- Կոնվենցիայի 10.1 հոդվածը կողմերին պարտավորեցնում է իրենց օրենքներում և համաձայնագրերում ներառել օտարերկրյա պետական պաշտոնյայի կաշառքի վերաբերյալ հանցագործությունները որպես օտարերկրյա պետության օրենքը խախտած անձի հանձնումն այդ պետությանը:

# 1997 թ. OECD-ի աշխատանքային խումբը կաշառքի վերաբերյալ գործերով <http://www.oecd.org/bribery/>


- 1997 թ. OECD-ն ստեղծեց աշխատանքային խումբ կաշառքի վերաբերյալ գործերով՝ վերահսկելու կոնվենցիայի անդամ-երկրների կողմից կոնվենցիայի չափորոշիչների պահպանումն ու կիրառումը: Մոնիտորինգն ընթանում է 2 ուղղություններով.
- 1. տվյալ պետության կաշառքի դեմ ուղղված իրավական ակտերի համապատասխանությունը կոնվենցիային.
- 2. մեկ-շաբաթյա ինտենսիվ հանդիպումներ վերահսկվող պետության առևտրային կազմակերպությունների և հասարակության ներկայացուցիչների հետ՝ հավաստիանալու համար, թե որքանով են տվյալ երկրի կաշառքի դեմ ուղղված պայքարի իրավական ակտերն իրականում կիրառվում:.

Եվրոպայի հանձնաժողովի արդարադատության  
գլխավոր տնօրինության, ազատության և  
անվտանգության խորհրդի ազգային փորձագետ  
Լուսինդա Մակ Մահոն, Բելգիա, Բրյուսել

Եվրամիության պահանջները  
կոռուպցիայի դեմ պայքարն  
արդյունավետ իրականացնելու  
գործում

*Մայիսի 3, 2006*

# ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ




# ԱԿՏԻՎ ԿՈՌՈՒՊՊՑԻԱ

- Խոստանալ, առաջարկել կամ տալ անձին կամ կազմակերպությանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չափից ավելի շահ/օգուտ՝ ի նպաստ իր կամ մեկ այլ անձի կամ կազմակերպության շահերի համար, որպեսզի այդ անձն իր գործողություններով կատարի կամ անգործությամբ զերծ մնա կատարելուց որոշակի գործողություններ իր պարտականությունների կատարման ընթացքում

# ՊԱՍԻՎ ԿՈՌՈՒՊՊՑԻԱ

- Միջնորդել կամ ընդունել, ուղղակիորեն կամ անուղղակիորեն այսպես կոչված «անտեղի չափից ավելի շահ/օգուտ» իր կամ մեկ այլ անձի կամ կազմակերպության համար, որպեսզի այդ անձն իր գործողություններով կամ անգործությամբ զերծ մնա կատարելուց որոշակի գործողություններ իր պարտականությունների կատարման ընթացքում

# Եվրամիության հակակոռուպցիոն օրենսդրության դասակարգումը



## ԱՆԴԱՍ-ԵՐԿՐՆԵՐԸ ՊԱՐՏԱԿՈՐ ԵՆ

- կիրառել քրեական պատասխանատվության արդյունավետ, համապատասխան և սարհամոզիչ միջոցներ (տուգանք, բանտարկություն, ազատազրկում նվազագույնը 5 տարի ժամանակով, որը կարող է առաջ բերել եքստրադիցիայի՝ հանձնման)։
- սահմանել պատասխանատվության միջոցներ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վրա, ովքեր իրավունք ունեն որոշումներ ընդունելու կամ հսկողություն իրականացնելու։
- իրականացնել արդարադատություն այնպիսի իրավախախտումների վերաբերյալ, որոնք ամբողջովին կամ մասնակիորեն տեղի են ունենում իրենց տարածքում, կամ երբ անձն իրենց տարածքում պատճառում կամ նպաստում է իրավախախտման կատարմանը կամ իրավախախտողն անդամ-երկրի քաղաքացի է։

# 1996 թ. սեպտեմբերի 27-ի արձանագրությունը

կոչված է ապահովելու.

- պետական կամ համայնքային պաշտոնյայի հասկացությունները, որոնք վերաբերում են ընտրված կամ նշանակված պաշտոնյաներին.
- ակտիվ կամ պասիվ կոռուպցիայի սահմանումները՝ կապելով այն այնպիսի գործողության կամ անգործության հետ, որը վնասում է կամ հակված է վնասելու Եվրամիության տնտեսական շահերը.
- անդամ-երկրների կողմից ներպետական օրենսդրության կիրառումը համանման ձևով, ինչպես դա իրականացվում է պետական կամ համայնքային պաշտոնյաների կողմից:

## 1996 թ. նոյեմբերի արձանագրությունը

- Լիազորում է անդամ-երկրներին գործը հանձնել Եվրոպական համայնքի արդարարատության դատարան՝ 1995 թ. կոնվենցիային և նրան առնչվող արձանագրությունների մեկնաբանության նախնական կարգավորման նպատակով:

# 1997 թ. արձանագրությունը

1997 թ. արձանագրությունը պարտավորեցնում էր անդամ-երկրներին եկամուտների և փողի լվացումը որակելու որպես քրեորեն պատժելի արարք, սահմանում էր.

- իրավաբանական անձինք, ինչպես օրինակ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, կարող էին պատասխանատվության ենթարկվել այնպիսի իրավախախտումների համար, ինչպիսիք էին խարդախությունը, ակտիվ կոռուպցիան և եկամուտների լվացումը, ներառելով ոչ միայն այն դեպքերը, երբ իրավախախտումը թույլ էր տրվել իրավաբանական անձի անփութության հետևանքով, այլ նաև այն դեպքերը, որտեղ բացակայում է համապատասխան վերահսկողությունը ծառայողների և իրավաբանական անձանց ներկայացուցիչների վրա.
- սանկցիաներ, որոնք պետք է լինեին արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ և ներառեին քրեական և ոչ քրեական պատասխանատվության միջոցներ՝ կախված անդամ-երկրների իրավական համակարգից:

# 1996 թ. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

- Ակտիվ և պասիվ կոռուպցիան մասնավոր սեկտորում որպես քրեորեն պատժելի արարք անդամ-երկրներում.
- Իրավաբանական անձինք նույնպես պատասխանատվության ենթարկվեն ակտիվ և պասիվ կոռուպցիայի համար.
- Անդամ-երկրները գործողության մեջ դնեն քրեական պատասխանատվության արդյունավետ, համարժեք և համոզիչ միջոցներ: Այստեղ կարևոր է նաև վկայակոչել պատասխանատվության աստիճանն ակտիվ և պասիվ կոռուպցիայի համար՝ առավելագույնը 1-3 տարի ազատազրկմամբ, իսկ այն անձինք, ովքեր պատասխանատվության են ենթարկվում ձեռնարկատիրական գործունեության հետ կապված, որոշ դեպքերում ժամանակավորապես պետք է արգելվեն իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն կամ այդ գործունեությանը համանման այլ գործունեություն

# 2003 թ. մայիսի Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակված կոռուպցիայի վերաբերյալ հաղորդակցությունը

- ցույց տալ այն արդյունքները, ինչի հասել են Եվրամիության շրջանակներում.
- բացահայտել այն շրջանակները, որտեղ նոր ներուժի կարիք է զգացվում.
- բացահայտել բոլոր այն հնարավոր ուղղությունները, որտեղ Եվրամիությունը պետք է հետագա գործողությունները ձեռնարկի կոռուպցիայի դեմ պայքարում: Լյուսինդան կարևորեց, որ հանձնաժողովի հիմնական նպատակը կոռուպցիայի նվազեցումն է Եվրոպայի կառույցներում, անդամ-երկրներում և Եվրամիությունից դուրս բոլոր շրջանակներում, և հաղորդակցությունը կոչ է անում կոռուպցիոն բոլոր գործողությունների հայտնաբերումը և պատժումը, անօրինական եկամուտների բռնագանձումը և բոլոր կոռուպցիոն տարբերակների նվազեցումը՝ պետական կառավարման թափանցիկ և հաշվետու չափորոշիչներ սահմանելու միջոցով: Այն դիմում է բոլոր անդամ-երկրներին անհապաղ ընդունելու համապատասխան ազգային և միջազգային հակակոռուպցիոն փաստաթղթեր:

## 2003 թ. Հաղորդակցության 10 սկզբունքները

- ուժեղ քաղաքական աջակցության անհրաժեշտությունը կոռուպցիան բացահայտելու ուղղությամբ.
- համապատասխան միջազգային փաստաթղթերին միանալու անհրաժեշտությունը.
- օրենսդրության արդյունավետ իրագործումը.
- քաղաքացիական և հանրային ծառայողների հավաքագրման երաշխիքները.
- պետական կառավարման բոլոր ոլորտների ամբողջականությունը, պատասխանատվությունը և թափանցիկությունը.
- պետական կառավարման բոլոր ոլորտներում էթիկայի/ վարվեցողության կանոնագրքի մշակումը.
- տեղեկացնողների պաշտպանությունը հանրային և մասնավոր սեկտորում.
- հասարակության իրազեկումը կոռուպցիայի հետևանքների վերաբերյալ.
- որոշակի միավորների զերծ պահել քաղաքականության մշակման օրինագծերի վրա իրենց ազդեցությունից.
- օգնելու մասնավոր սեկտորին ճանաչելու և պայքարելու կոռուպցիայի դեմ

# 2005 թ. հունիսի 2-3-ի Եվրոպայի խորհրդի Գործունեության Ծրագիրը

1. վերահսկել անդամ-երկրների կողմից 2003 թ. Շրջանակային Որոշման իրագործումը մասնավոր սեկտորի կոռուպցիայի շրջանակներում, հետագայում այն նպատակամղված է գնահատել անդամ-երկրների հակակոռուպցիոն քաղաքականությունը՝ ամրապնդելով գնահատման և վերահսկողության ընթացակարգերը.
2. հակակոռուպցիոն մարմինների միջև համագործակցության ամրապնդումը.
3. պետական պաշտոնյաների ամբողջականության և վարքագծի կանոնագրքի անհրաժեշտության ուսումնասիրումը.
4. պետական պաշտոնյաների վրա պարտականությունների սահմանումը կաշառքի վերաբերյալ դեպքերի զեկուցման, եկամուտների հայտարարագրման և ձեռնարկատիրական գործունեության հետևանքով նյութական շահ ստանալու ուղղությամբ:

# 2005 թ. Եվրոպայի Խորհրդի Գործունեության Ծրագրի շրջանակները

- 2005 թ. հունիսի 2-3-ին Եվրոպայի Խորհրդի Գործունեության Ծրագիրը.
- 2005 թ. հունիսի 2-ին հանձնաժողովի հաղորդագրությունը «Ստրատեգիական պլանների մշակումը կազմակերպված հանցագործությունների բացահայտման վերաբերյալ».
- հատուկ փաստաթղթի պատրաստումը Եվրամիության արտաքին հարաբերությունների վերաբերյալ, որը և կքննարկի արտաքին և ներքին հարաբերությունների վերաբերյալ ընթացակարգերը.
- մի շարք փորձագիտական և գնահատման առաքելություն 3-րդ երկրներում, ինչպես նաև երկկողմանի օրինագծեր.
- միջազգային փաստաթղթերի զարգացումը, ՄԱԿ-ում կամ Տնտեսական գործունեության խնդիրը (առաջարկություններ եկամուտների լվացման և տեռորիզմի ֆինանսավորման ուղղությամբ), ՄԱԿ-ի կոնվենցիան ազգամիջյան կազմակերպված հանցավորության վերաբերյալ:

GRECO-ի նախագահ, Սլովենիայում  
կոռուպցիայի կանխարգելման  
հանձնաժողովի նախագահ Դրագո Կոս

*ՀԱՄԱԿԱՄՔՎԱԾ ՊԱՅՔԱՐ*

*ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ*

*2006, մայիսի 4*

# Կոռուպցիայի սահմանումն ըստ Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիայի

*Կոռուպցիան նշանակում է՝ «պահանջել,  
առաջարկել, տալ կամ ընդունել,  
ուղղակիորեն կամ անուղղակիորեն,  
կաշառք կամ որևէ առավելություն կամ  
հեռանկար, որը պահանջվում է կաշառք  
ստացողից՝ կատարելու համատասխան  
գործողություն կամ դրսևորելու  
համապատասխան վարքագիծ...»*

Սլովենիայի հանրապետության օրենքը կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ և կոռուպցիայի Սլովենիայի հանրապետության կանխարգելիչ բանաձևը

«Կոռուպցիան մասնավոր և հանրային սեկտորներում պաշտոնատար կամ իրավաբանական անձանց կողմից իրենց վստահված գործունեության ցանկացած խախտում է, ինչպես նաև այն անձանց գործունեությունը, որոնք դրդում են խախտումների կամ ուլքեր օգուտ են ստանում իրենց կողմից թույլ տրված խախտումից՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն խոստանալով, առաջարկելով կամ ստանալով կամ պահանջելով շահ իրենց կամ այլ անձանց համար»:

# ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

- կաշառքի հետ կապված հարաբերություններ.
- գույքի յուրացում., կողոպուտ, խարդախություն.
- պաշտոնական դիրքի չարաշահում.
- շահերի բախում.
- բաժնետոմսերի ապօրինի առք ու վաճառք ընկերության ծրագրերի մասին գաղտնի տեղեկություններ ունեցող մարդկանց կողմից.
- ապօրինի հարստացում.
- ապօրինի նվեր, շահ կամ անօրինական միջնորդավճարի առաջարկում կամ ստացում.
- արտոնությունների (կողմնակալության) դրսևորում, շահերի բախում.
- ապօրինի քաղաքական մասնակցություն:

# ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Պրն. Դրագո Կոսը կոռուպցիայի դեմ պայքարում կարևորեց պրոֆեսիոնալիզմի բարձրացումը և հանրային ֆոնդերի նպատակահարմար օգտագործումը, որին կարելի է հասնել անկախ և մասնագիտացված աշխատանքի միջոցով՝ ստեղծելով էթիկայի կանոնագիրք, վերապատրաստելով ծառայողներին ոչ միայն հասկանալու իրենց պարտականությունները, այլ նաև ծանոթանալու էթիկայի կանոններին և ապահովելու հնարավորինս չափ առավելագույն պրոֆեսիոնալիզմը՝ մշակելով կառավարման մեխանիզմներ աշխատանքային ներքին կարգապահական կանոնների իրականացման համար, մշակելով շահագրգռվածության դրական միջոցներ կոռուպցիայի կանխարգելման հաջող աշխատանքների համար, իրագործելով ռոտացիա որոշակի պաշտոններում, արգելելով անտեղի ազատ հայեցողության իրավունքը, սահմանելով կանոններ բարձրագույն պաշտոնների վերահսկողության համար և համապատասխան ծրագրեր՝ քաղաքական կուսակցություններին ֆինանսավորելու համար:

# Կոռուպցիայի դեմ պայքարի իրականացման մի շարք ուղղություններ

- Ապահովել պետական պաշտոնյաների թափանցիկ զվարթագիծը,
- Հասարակությանը ծանոթացնել իրենց իրավունքներին և պարտականություններին՝ ներգրավել և վերապատրաստել լրատվամիջոցներին,
- Խրախուսել հասարակական կազմակերպությունների գործունեությունը,
- Մշակել կոռուպցիայի բացահայտման միջոցառումներ, մեծացնելով քաղաքացիական հսկողությունը, կարևորելով մասնավոր սեկտորի նվաճումները կոռուպցիայի կանխարգելման դեմ պայքարում:
- մեծացնել քաղաքացիական հսկողությունը, կարևորելով մասնավոր սեկտորի նվաճումները կոռուպցիայի կանխարգելման դեմ պայքարում

# Կոռուպցիայի դեմ պայքարի իրականացման մի շարք ուղղություններ

- ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան պարտավորեցնում է պետություններին «մշակել և իրագործել արդյունավետ համագործակցված հակակոռուպցիոն քաղաքականություն» և ապահովել այս սկզբունքի իրագործման համար անկախ կանխարգելիչ մարմինների գոյությունը:
- Քրեական իրավունքի կոռուպցիայի կոնվենցիան պահանջում է բոլոր կողմերից ընդունելու այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են կոռուպցիայի դեմ պայքարի համար հատուկ նեղ մասնագիտացված մարմինների ստեղծման համար, որոնք կլինեն անկախ՝ համաձայն տվյալ երկրի հիմնական սկզբունքների, այսպիսով, նման մարմինների կողմից հակակոռուպցիոն միջոցառումների իրականացումը գերծ կմնա որևէ ապօրինի միջամտությունից և ճնշումից:

# Հակակոռուպցիոն մարմիններ



ՄԱԿ-ի կոնվենցիայի

36-րդ հոդվածը վկայակոչում է մասնագիտացված մարմինների կամ մարդկանց պատրաստունը կոռուպցիայի դեմ պայքարելու համար:

ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԴԵՄ ՀԱՄԱՏԵՂ  
ՊԱՅՔԱՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՎԵՆԻՍԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՄԱՅԻՍԻ 2-5, 2006  
ՏՐԻԵՍՏԵ, ԻՏԱԼԻԱ